ԳԻՏԱԺՈՂՈՎ

«Գիտական հետազոտությունների առեւտրայնացումը Հայաստանում» թեմայով

Երեւան- Ծաղկաձոր
2009թ., 01-03 ապրիլ

Միջազգային գիտատեխնիկական կենտրոնը (ՄԳՏԿ, Международный научно-технический центр-МНТЦ) վերջին տարիներին հատկապես կարեւորում է գիտական նախագծերի արդյունքների առեւտրայնացմանը՝ տարբեր դասընթացներ, գիտական եւ տեխնիկական սեմինարներ կազմակերպելով: Հայաստանում առ այսօր ֆինանսավորվել է գիտական արդյունքների առեւտրայնացման 2 նախաձեռնություն՝ 200 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ:

Ապրիլի 1-3-ը Երեւանում մեկնարկեց Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի հայաստանյան գրասենյակի կողմից կազմակերպված գիտաժողովը՝ նվիրված գիտական հետազոտությունների առեւտրայնացման թեմային: Գիտաժողովին մասնակցում էին ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի եւ ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ճյուղային նախարարությունների, ՀՀ ԳԱԱ եւ մի շարք բուհերի ու այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ, Ռուսաստանի Դաշնությունից հրավիրված մասնագետներ:

Գիտաժողովի բացումը տեղի ունեցավ Երեւանում ՀՀ ԳԱԱ նախագահության դահլիճում: Բացման խոսքով հանդես եկան ՄԳՏԿ Հայաստանյան գրասենյակի տնօրենը, ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը, ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանը, ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը, ՄԳՏԿ գործադիր տնօրեն Ա. վան դեր Մեերը:

Հրավիրված մասնագետների թվում էր ՌԴ կառավարությանը կից Ժողովրդական տնտեսության ակադեմիայի ինովացիոն տեխնոլոգիաների բիզնեսի ֆակուլտետի դեկան Վ. Զինովը, որը դասախոսություններ կարդաց գիտական արդյունքների առեւտրայնացման մեխանիզմների եւ այդ ոլորտում Ռուսաստանի Դաշնության փորձի վերաբերյալ:

Ապրիլի 2-ին եւ 3-ին գիտաժողովը շարունակվեց Ծաղկաձորում: Գիտաժողովի ընթացքում հնչեցին Հայաստանում գիտության ոլորտի բարեփոխումների, ՄԳՏԿ-ի կողմից ֆինանսավորվող նախագծերի շրջանակներում իրականացվող առեւտրայնացման ներուժ ունեցող գիտական հետազոտությունների եւ տեխնոլոգիական մշակումների մասին բազմաթիվ գիտական զեկույցներ, այդ թվում՝ «Բիզնես ծրագրավորման հիմնական դրույթները» թեմայով ՌԴ ժողովրդական տնտեսության ակադեմիայից Յա. Վեդերնիկովի զեկույցը :

Ապրիլի 3-ին գիտաժողովի շրջանակներում կազմակերպված կլոր սեղանի ընթացքում անցկացվեցին քննարկումներ՝ գիտական արդյունքների առեւտրայնացման գործում պետության եւ գիտնականի ունեցած դերի վերաբերյալ: Արդյունքում պայմանավորվածություն ձեռք բերվեց շարունակել Գիտության պետական կոմիտեի եւ Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի համագործակցությունը՝ գիտական արդյունքների առեւտրայնացմանը նվիրված դասընթացներ եւ սեմինարներ կազմակերպելու միջոցով:

Տեղեկատվության եւ հասարակայնության
հետ կապերի բաժին